«ՖՐԱՆՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
FONDATION « CENTRE D'ENSEIGNEMENT PROFESSIONNEL FRANCO-ARMENIEN »

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022

ք.Երևան
Տիգրան Մեծի 38

Հաշվետու ժամանակաշրջանում «Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ **Հիմնադրամ**) իր գործունեությունը ծավալել է՝ համապատասխան իր **Ռազմավարական ծրագրի,** որը հաստատվել է 2022 թվականի մայիսի 4-ին Լիոնի քաղաքապետարանում կայացած ՀԽ նիստի ընթացքում:

Առաջնորդվելով իր **տեսլականով** և օգտագործելով մարդկային և նյութատեխնիկական իր ողջ ներուժը՝ Հիմնադրամն իր գործողություններն ուղղորդել է մասնագիտական կրթության զարգացմանը, Ֆրանկոֆոնիայի տարածմանը՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան ժամանակակից և դինամիկ մասնագիտական կրթություն իրականացնելու նպատակով:

Հիմնադրամն իր **հիմնարար արժեքներին** համապատասխան կիրառել է դասավանդման նոր տեխնոլոգիաների զարգացմանը համահունչ ուսումնական մեթոդներ:

ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

Արտաքին համագործակցություն Ֆրանսիայի և այլ երկրների գործընկերների հետ:

Իր պատմական գործընկեր ՍԵՊՌ ընկերության ցանցերի միջոցով Հիմնադրամը զարկ է տվել միջազգայնացման գործընթացին.

- 2022 թվականին ՍԵՊՌ կամպուսը 3 օր շարունակ հյուրընկալել է EfVET Thematic Team 2022 համաժողովին մասնակցելու նպատակով աշխարհի 22 երկրներից Ֆրանսիա ժամանած 130 մասնակիցների:
  Հիմնադրամի ՀԽ հայ ներկայացուցիչները ևս մասնակցություն են ունեցել վերոնշյալ համաժողովին՝ ներկայացնելով հաստատության գործունեությունը, տեղական և միջազգային գործընկերների հետ կատարած փոխանակման ծրագրերը (Տե՛ս Ֆիմուկյան ակնարկներ N18):

- Հիմնադրամն ընտրվել է որպես EfVET (Մասնագիտական կրթության և ուսուցման եվրոպական ֆորում) հանրահայտ ցանցի նոր անդամ EfVET-ի Գլխավոր ասամբլեայի ժամանակ, որը կայացել է 31-րդ տարեկան համաժողովի շրջանակներում հոկտեմբերի 26-ից 29-ը Ֆինլանդիայի Կուոպիո քաղաքում:

- Համաժողովը մեծ հնարավորություն է ընձեռել Հիմնադրամին՝ իր պատմական գործընկեր ՍԵՊՌ-ի հետ միասին հանդիպելու նոր գործընկերների, քննարկելու մասնագիտական կրթության զարգացմանն ու Հայաստանում եվրոպական փորձի ներդրմանն առնչվող մի շարք հարցեր, մասնավորապես, միջազգայնացման և կարողությունների զարգացման բնագավառում:

- Հաշվետու ժամանակահատվածում Հիմնադրամը դարձել է Եվրոպական կրթական հիմնադրամի գերազանցության կենտրոնների ցանցի անդամ (ETF Network of Excellence) և լրացրել է ETF-ի կողմից ներկայացված հարցաշարը՝ սահմանելով նպատակներ հետագա տարիների համար:
  Այս համագործակցության շրջանակներում Հիմնադրամը հյուրընկալել է ETF-ի փորձագետ, հայաստանյան հարցերի համակարգող տիկին Քրիստիանա Բուրցիոյի պատվիրակությանը: Այցի ընթացքում պատվիրակությունը ծանոթացել է կենտրոնի գործունեությանն ու իրականացրած ծրագրերին:

- Հունիսի 29-ին և 30-ին Լիոնում կայացած ֆրանս-հայկական ապակենտրոնացված համագործակցության 4-րդ համագումարի շրջանակներում Հիմնադրամը ֆրանսիական հանրությանը ներկայացրել է իր զարգացման ծրագիրը՝ նոր կապեր հաստատելով Ֆրանսիայի և հայկական սփյուռքի նոր գործընկերների հետ:

ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱ

2022 թվականի հուլիսի 15-ին Կայուն զարգացման հայկական հիմնադրամի կողմից Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատան հետ համատեղ մեկնարկած ծրագրերի համար հայտարարված մրցույթի արդյունքում Հիմնադրամը դրամաշնորհ է ստացել Հայաստանում ֆրանսիական մշակույթին և/կամ ֆրանկոֆոնիային առնչվող նախագծերի իրականացման համար:

Ծրագրի նպատակն է ամրապնդել Հիմնադրամի ուսանողների և դասավանդողների լեզվական կարողությունները, մասնավորապես մասնակցել փոխանակման ծրագրերի ինչպես ՍԵՊՌ-ի ֆրանսիացի գործընկերների, այնպես էլ հնարավոր այլ գործընկերների հետ:

Ծրագրի շրջանակներում ֆրանսերեն լեզվի և վարսահարդարման գործնական դասընթացները միաժամանակ անցկացվում են երկու դասավանդողների կողմից (ֆրանսերենի դասախոսի և վարսահարդարման արտուսվարպետի), ովքեր ապահովում են դասընթացի տրամաբանական հաջորդականությունը: Դասընթացները տեղի են ունենում գործնական պարապմունքների համար նախատեսված լաբորատորիաներում և լսարաններում: Նախապատվությունը տրվում է բանավոր խոսքի զարգացմանը:

Ծրագիրը նպատակ է հետապնդում Հիմնադրամում իրականացնել փորձարարական և նորարարական նախագծեր. Հայաստանում ուսուցման նոր համակարգի ներդրում (ֆրանսերեն լեզվի տիրապետման միջոցով հմտությունների և կարողությունների ձեռքբերում), նույն մոտեցման կիրառում ՍԵՊՖԱ-ի մյուս մասնագիտություններում, երիտասարդների շրջանում ֆրանսերեն սովորելու շահագրգռվածության բարձրացում, միջազգային շարժունություն:

ՀՈՒՇԱԳՐԵՐ

Հաշվետու ժամանակահատվածում ստորև նշված գործընկերների հետ ստորագրվել են հետևյալ հուշագրերը.

1. Լիոնի և Երևանի միջև փոխըմբռնման հուշագիր, որը նպատակ է հետապնդում համատեղել ջանքերը կրթության ոլորտում՝ շնորհիվ այն աջակցության, որը քաղաքները կտրամադրեն Հիմնադրամի զարգացման համար՝ մեծ աջակցություն ցուցաբերելով ծրագրի կայացմանը: Հիմնադրամի վերակազմակերպումը Արհեստների կամպուսի, որը կներառի Հայաստանում մասնագիտական ուսուցման միջազգային նորարարությունների դինամիկա և կապահովի ֆրանս-հայկական համագործակցության շարունակականությունը:

2. Զինծառայողների ապահովագրության հիմնադրամի հետ համագործակցության հուշագիր՝ ի նպաստ 44-օրյա պատերազմի ընթացքում վիրավորում ստացած զինծառայողների կրթության կազմակերպման:

3. Փոխըմբռնման հուշագիր «Զինվորի տուն» վերականգնողական կենտրոնի հետ՝ 44-օրյա պատերազմում վիրավորում ստացած զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների շարունակական կրթության կազմակերպման նպատակով:

4. Փոխըմբռնման հուշագիր Ֆրանսիայի «Հույսի ուժ» ասոցիացիայի հետ, որը ֆինանսավորել է կենտրոնի այն 9 ուսանողների ուսման վարձավճարները, ում ընտանիքի անդամները մասնակցել են Արցախյան 44-օրյա պատերազմին:

ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Հիմնադրամը մշակել է գնահատման և մշտադիտարկման գործիքներ՝ հաշվի առնելով ուսանողների առաջադիմությունը, շրջանավարտների և գործատուների հետ հետադարձ կապը:
Հիմնադրամը շարունակել է ապահովել դասավանդողների կատարելագործումը ժամանակակից դասավանդման մեթոդների և նոր տեխնոլոգիաների կիրառմանն ուղղված վերապատրաստումների միջոցով:

2022 թվականին «Կարի արտադրության տեխնոլոգիա» մասնագիտության դասավանդող Սոնա Ոսկանյանը փորձագիտական վերապատրաստում է անցել WorldSkills Eurasia 2022 մրցույթի շրջանակներում, այնուհետև մասնակցել է այս մրցույթին որպես անկախ փորձագետ:

2022 թվականի հուլիսի 18-ից 22-ը Հիմնադրամի դասախոսական թիմը մասնակցել է «Action Against Hunger» կազմակերպության կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացին, որն իրականացնում է նորարարական և ներառական «SHUTTLE» մեթոդաբանությունը Հիմնադրամում «Տեղահանված և տեղաբնակ խոցելի խմբերի տնտեսական և սոցիալական ներգրավվածությունը Հարավային Կովկասում» (EPIC) ծրագրի համագործակցության շրջանակում: Ծրագրի նպատակն է զարգացնել երիտասարդների փափուկ հմտությունները և օգնել նրանց գտնել իրենց տեղը աշխատաշուկայում:
Ուսանողների համար նախատեսված վերապատրաստումը մեկնարկել է 2022 թվականի դեկտեմբերից՝ 4 ամիս տևողությամբ: Հետագայում նախատեսվում է այս պիլոտային ծրագիրը տարածել մարզերում՝ համագործակցելով ՀՀ ԿԳՄՄՆ-ի հետ:

Բանիմաց և ինքնուրույն երիտասարդություն ունենալու համար Հիմնադրամը կարևոր է համարում ունենալ շրջանավարտներ, ովքեր գոհ են ստացած կրթությունից և ունեն գիտելիքներ, հմտություններ և կարողություններ, որոնք անհրաժեշտ են ժամանակի մարտահրավերներին դիմակայելու համար:
Հիմնադրամի խոհարարական գործ մասնագիտության ներկայացուցիչ Գայանե ՍԻՄՈՆՅԱՆԸ, ով արժանացել էր առաջին մրցանակի՝ ստանալով «World Skills Armenia» մրցույթի ոսկե մեդալը, մասնակցել է «World Skills» 46-րդ միջազգային մրցույթին Շվեյցարիայի Լյուցեռն քաղաքում՝ ձեռք բերելով հարուստ փորձ և կիսելով այն Հիմնադրամի շրջանակներում:

ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. **Շարունակական կրթություն ՔՈԱՖ (Հայաստանի մանուկներ) հիմնադրամի հետ համագործակցության շրջանակներում:**

Հաշվետու ժամանակահատվածում ՍԵՊՖԱ-ն իրականացրել է Սպասարկման կարճաժամկետ դասընթացներ Լոռու մարզում՝ համագործակցելով ՔՈԱՖ հիմնադրամի հետ՝ այսպիսով հավաստելով դեպի մարզեր իր տարածում ունենալը: Ծրագիրը նախատեսում է 24 շահառուների վերապատրաստում, որոնցից 13-ը արդեն մասնակցել են դասընթացին ՔՈԱՖ-ի տարածքում՝ առանց լքելու բնակավայրը:

2. Շարունակական կրթություն պատերազմի ընթացքում վիրավորում ստացած զինծառայողների համար

«Զինվորի տուն» վերականգնողական կենտրոնի, Զինծառայողների ապահովագրության հիմնադրամի և Օվերն Ռոն-Ալպ շրջանի ֆրանս-հայկական ասոցիացիայի (AFAARA) հետ ստորագրված հուշագրերի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում շարունակվել է 44-օրյա պատերազմի ընթացքում վիրավորում ստացած զինծառայողների շարունակական կրթության ծրագիրը: .

AFAARA ասոցիացիայի աջակցությամբ ընդհանուր թվով 37 շահառու անվճար հիմունքներով մասնակցել է Հիմնադրամում իրականացվող կարճաժամկետ դասընթացներին, որոնցից 27-ը՝ հաշվետու ժամանակահատվածում:

3. Կարճաժամկետ դասընթացներ դերձակների համար

Հաշվետու ժամանակահատվածում 4 կին շարունակական վերապատրաստում են անցել՝ թեթև արդյունաբերության ոլորտում աշխատանք գտնելու նպատակով:

ՓՈԽԱԴԱՐՁ ԱՅՑԵՐ, ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվետու ժամանակահատվածում Հիմնադրամ են այցելել հետևյալ պատվիրակությունները.

- Ֆրանսիայի Նոր Ռոնի և Լիոնի Մետրոպոլի սենատոր, Ֆրանսիա-Հայաստան բարեկամական խմբի նախագահ պարոն Ժիլբեր-Լյուկ Դրվինազի գլխավորությամբ Հայաստան ժամանած պատվիրակության այցը: Պատվիրակության կազմում էր նաև Բուշ-դյու-Ռոնի սենատոր տիկին Բրիժիտ Դնեզան:

- Ֆրանսիայի Լիոն քաղաքում գործող «Հույսի ուժ» կազմակերպության անդամ տիկին Աննի Եկմեկչյանի և համանուն ասոցիացիայի հայաստանյան ներկայացուցիչ տիկին Սուսաննա Գասպարյանի այցը:

- Ֆրանսիայի դեսպանության հրավերով շրջագայություններով Հայաստանում գտնվող Bande à Tyrex կրկեսային խմբի այցը:
  Յոթ ակրոբատներից բաղկացած հեծանվախումբը ուսումնական կենտրոնում հանդես է եկել հեծանվային երաժշտական ներկայացումով և հետաքրքիր շոու ծրագրով:

- ETF-ի փորձագետ, հայաստանյան հարցերի համակարգող տիկին Քրիստիանա Բուրցիոյի այցը:

- Երևանի քաղաքապետարանի պատվիրակության հետ Հիմնադրամի տնօրեն տիկին Գոհար Գրիգորյանի այցը Լիոն՝ մասնակցելու Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի նիստին և հայ-ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության 4-րդ համաժողովին, ինչպես նաև Լույսերի տոնին:

- Տիկին Գոհար Գրիգորյանի այցը ՄԵՊՌ Անոնե՝ հանդիպելու հաստատության աշխատանքային թիմին:

Մանրամասն տեղեկանալու համար տե՛ս Ֆիմուկյան ակնարկներ N 18, 19

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

2022-2023 ուստարվա ընդունելությունը.

2022-2023 ուստարում 252 շահառու, որոնցից 208-ը ուսանողներ, ՄԵՊՖԱ-ում ստացել է դիպլոմավորված կրթություն:
Նախորդ տարվա հետ համեմատած գրանցվել է ուսանողների թվի աճ 11%-ով:

2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Ա. ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՔ

Հ/Հ	Անվանումը	Ուսանողների թիվը
1.	Խոհարարական գործ – I կուրս	27
2.	Խոհարարական գործ – II կուրս	24
3.	Խոհարարական գործ – III կուրս	23
4.	Կարի արտադրության տեխնոլոգիա- I կուրս	12
5.	Կարի արտադրության տեխնոլոգիա- II կուրս	9
6.	Կարի արտադրության տեխնոլոգիա- III կուրս	13
7.	Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում- I կուրս	10
8.	Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում- II կուրս	12
9.	Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում- III կուրս	5
10.	Հրուշայեղենի տեխնոլոգիա- I կուրս	14
11.	Հրուշայեղենի տեխնոլոգիա- II կուրս	5
ԸՆԴԱՄԵՆԸ Ա		154

Բ. ՄԻՋՆԱԿԱՐԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՔ

Հ/Հ	Անվանումը	Ուսանողների թիվը
1.	Խոհարարական գործ	15
ԸՆԴԱՄԵՆԸ Բ		15

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՔՈՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹԻՎԸ -169

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Ա. ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՔ

Հ/Հ	Անվանումը	Ուսանողների թիվը
1	Ատամնատեխնիկական գործ- I կուրս	13
2	Ատամնատեխնիկական գործ- II կուրս	10
3	Ատամնատեխնիկական գործ- III կուրս	11
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԳ		34

Բ. ՄԻՋՆԱԿԱՐԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՔ

Հ/Հ	Անվանումը	Ուսանողների թիվը
1	Ատամնատեխնիկական գործ- I կուրս	3
2	Ատամնատեխնիկական գործ- II կուրս	2
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԳ		5

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹԻՎԸ -39

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 208 ՈՒՍԱՆՈՂ

Խմբերում աղջիկ/տղա հարաբերակցությունը հետևյալն է.







«Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում», «Հրուշակեղենի տեխնոլոգիա», «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտությունների գծով ուսանողների թվի աճ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Քննություններից հետո ուսանողների վերջնական թիվը.
Հաշվետու ժամանակահատվածում շրջանավարտների ընդհանուր թիվը՝ 59:

Մասնագիտությունը	Տևողությունը	Ուսանողների թիվը
Խոհարարական գործ	1-3 տարի	36
Կարի արտադրության տեխնոլոգիա	1-3 տարի	19
Ատամնատեխնիկական գործ	2-3 տարի	4
ԸՆԴՀԱՆՈՒՐ		**59**

Կազմեց՝ Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆԸ
ՄԵՊՖԱ տնօրեն
20 մարտի, 2023